

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈԻԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

ՀՏԴ 342.9

DOI: 10.52063/25792652-2024.4.23-25

ՆԱԶԵԼԻ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

nazeli-sugiasyan@yandex.ru
ORCID: 0000-0003-3591-3216

Գիտական հոդվածի նպատակը հեղինակային բացահայտումների ճանապարհով իրավագիտության ոլորտում ֆինանսական իրավունքի ենթադյուղերից մեկի՝ «Բյուջետային օրենսդրության իրավախախտումների համար» պատասխանատվության, նրա իրավական առանձնահատկությունների և բյուջետային արարողակարգի իրավակարգավորումների լուսաբանումն է և տեսական ու գործնական մեծարժեք իրավագիտական նոր հայեցակարգերի մշակումը:

Գիտական հետազոտության խնդիրը հեղինակային բացահայտումների միջոցով ֆինանսական իրավունքի ճյուղի տեսական և գործնական նշանակության մեծարժեք իրավագիտական նոր հայեցակարգերի մշակումն է: Խնդիր է հանրապետության իրավական համակարգի ստվերում մնացած բյուջետային օրենսդրության, առավել ևս վերջիններիս խախտման դեպքում բյուջետային իրավաբանական պատասխանատվության և վարույթի իրավակարգավորումներին նվիրված հիմնախնդիրների բացահայտումը:

Գիտական հոդվածի շարադրանքը ամփոփված է իրավագիտական հիմնախնդիրների բացահայտումների իրավա-համեմատական և վերլուծական մեթոդների ելակետային դրույթների պահանջների հաշվառմամբ, որոնց շնորհիվ հստակեցված են մասնավոր և հանրային իրավունքի ճյուղերին ներհատուկ իրավակարգավորումների առանձնահատկությունները, հատկապես ընդգծված, որ բյուջետային պատասխանատվության կիրառման գործընթացներում անհրաժեշտ է գործնականում հենվել քաղաքացիական գույքային պատասխանատվության հարկադրանքի միջոցների կիրառման արդյունավետության վրա բյուջետային ֆինանսավորման և բյուջետային վարկավորման խախտումների դեպքում պետական բյուջեին հասցված վնասը վերականգնելիս:

Հոդվածում ամփոփված նյութի բովանդակությունը բերում է այն եզրակացության, որ տնտեսական բարեփոխումների, առավել ևս՝ դրանց արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարեփոխել գործող բյուջետային օրենսդրության ոլորտում պետական բյուջետային ֆինանսավորման և վարկավորման սկզբունքային դրույթները, մշակել տնտեսվարման նոր իրավական կարգավորումներն արտացոլող նորմատիվ և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև նախապատրաստական աշխատանքներ տանել բյուջետային օրենսգրքի մշակման ուղղությամբ:

* Հոդվածը ներկայացվել է 09.10.2024թ., գրախոսվել՝ 24.10.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Հիմնաբառեր՝ պատասխանատվություն, իրավաբանական պատասխանատվություն, բյուջետային օրենսդրություն, բյուջետային իրավախախտում, բյուջետային հարկադրանքի միջոցներ, բյուջետային պատասխանատվություն, իրավական առանձնահատկություններ, բյուջետային սանկցիաներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության և Նրա հասարակայնության զարգացման տնտեսական, քաղաքական, սոցիալական և իրավական ժամանակակից բարեփոխումները պետության առաջ լուրջ և բարդ խնդիրներ են առաջադրում, որոնք անհետաձգելի լուծումներ են պահանջում: Հայաստանը այսօր հայտնվել է պատմական այնպիսի իրադարձությունների շղթայում, որոնց առաջադրած սոցիալ-տնտեսական, քաղաքական և իրավական հիմնախնդիրների լուծման համար ժամանակակից, տնտեսապես հզոր պետություններից հարյուրամյակներ են պահանջվել: Ներկա ժամանակաշրջանում ՀՀ առաջնահերթ լուծում պահանջող նպատակներից մեկը իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորումն է, որի արդյունավետ լուծման առաջին նախապայմաններից մեկը պետության ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական կարգապահությունը և ֆինանսական վերահսկողության, ինչպես նաև ֆինանսաիրավական պատասխանատվության արմատավորումն է, որոնք օրինականության ապահովման և իրավակարգի ամրապնդման հասարակական և պետական երաշխիքներ են:

Գործող ֆինանսաբյուջետային օրենսդրության կատարելագործման ուղիները

Ժամանակակից շուկայական տնտեսվարման պայմաններում պետության ֆինանսական գործունեության ծավալները աննախադեպ ընդլայնվում են կապված ֆինանսական ռեսուրսների շարժի, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի անհամեմատ աճի, դրանց ինչպես հավաքագրման, այնպես էլ ծախսերի իրականացման ձևերի փոփոխության, բյուջետային ֆինանսավորման և վարկավորման մեթոդներից օգտվող սուբյեկտների շրջանակների ընդլայնման, արտարժույթի գործառնությունների ծավալների մեծացման, բանկային վարկավորման ոլորտների ընդլայնման, հարկային քաղաքականության և առանձին հարկատեսակների դիմամիկ փոփոխությունների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս օղակների գործունեության լայնամասշտաբ գործածության հետ:

ՀՀ ֆինանսական համակարգի բոլոր օղակներից ազատորեն օգտվելու հնարավորությունը նպաստում է հասարակության տնտեսական զարգացմանը՝ դրականորեն արձագանքելով հասարակության ապագա ֆինանսատնտեսական բարեփոխումներին: Ֆինանսական գործունեության բարեփոխումները իրենց որակապես դրական փոփոխություններով երբեմն տեղիք են տալիս անօրինականությունների, որոնք ուղղված են ֆինանսական համակարգի, պետական կառավարման արդյունավետության անբավարար կազմակերպմանը, այդ թվում, հատկապես ֆինանսական վերահսկողության համակարգի մարմինների գործունեության պասիվությանը և թողտվությանը, որոնք բացի սուբյեկտիվ պատճառներից մեծապես պայմանավորված են պետության բյուջետային գործունեության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական բազայի անկատարությամբ, գործող իրավական ակտերի ցածր մշակվածության և ֆինանսական համակարգը կարգավորող օրենսգրքերի բացակայությամբ (բյուջետային, ֆինանսական):

Շուկայական տնտեսվարության անկատարության, ինչպես նաև պետության ֆինանսաբյուջետային գործունեությունը կարգավորող հենքային միասնական օրենսդրության բացակայությունը բացասաբար են անդրադառնում համապետական և տեղական կենտրոնացած դրամական ֆոնդերի ժամանակին ձևավորման վրա:

Ֆինանսական համակարգի տարբեր օղակներում թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձինք հաճախ իրենց ֆինանսական պարտավորությունները գիտակցված կերպով չեն կատարում: Խախտվում է պետական և համայնքային բյուջեների եկամուտների հավաքագրման ժամկետները, հարկերը և պարտադիր այլ վճարները չեն վճարվում: Առավել անհուսալի է վիճակը բյուջետային և պետական սոցիալական ապահովության համապետական ծախսերի իրացման ոլորտում: Որպես կանոն, բյուջետային նպատակային ֆինանսավորման ծախսերը հեռու են նպատակային լինելուց (դոտացիա, սուբվենցիա, սուբսիդիա): Օր օրի աճում է հանրապետությունում ձևավորվող կապիտալի արտահանումը, աճում է ՀՀ կառավարության և ՀՀ Կենտրոնական բանկի փոխառությունները՝ որպես արտաքին պարտք, ՀՀ պետական բյուջեի սղաճը ծածկելու համար, որը այսօր կազմում է շուրջ 12,157 միլիարդ ԱՄՆ դոլար (ejc.am):

ՀՀ ֆինանսական գործունեությունը վերահսկող մարմինների պաշտոնական հրապարակումների ուսումնասիրությունների արդյունքների գիտական վերլուծությունները հուշում են, որ այս ոլորտում մոռացված են համապետական ֆինանսական վերահսկողությունը և հսկողության անհրաժեշտությունը, անտեսված են ֆինանսական կարգապահության տարրական պահանջները, որոնք կենտրոնացված դրամական ֆոնդերը իրացնելիս, օրինականության շրջանցման պատճառով, ինչպես արձանագրված է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի զեկուլցման մեջ, տեղիք են տալիս ֆինանսական իրավախախտումների:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆինանսաբյուջետային գործունեությունը կարգավորող միասնական օրենսդրության բացակայությունը, առավել ևս գործող իրավական ակտերում բյուջետային պատասխանատվության սահմանման և կիրառման կարգի շրջանցումները, լինեն գիտակցված թե անտեղյակության կամ մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակի արդյունք, այնուամենայնիվ, պետության ֆինանսաբյուջետային գործունեության ցանկացած ոլորտում իրենց զգացնել են տալիս, քանի որ ֆինանսական համակարգի յուրաքանչյուր ֆոնդ ունի համապետական, ազգային ֆինանսատնտեսական հզորության ամրապնդման նպատակ, որոնց հասցված վնասը անհնար է լուծել վարչական կամ քրեական ներգործության միջոցներով, քանի որ վերջիններս հանդես են գալիս անհատական, կոնկրետ այս կամ այն անձի կողմից հասցված վնասի վերականգնմամբ և, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, պետությանը հասցված վնասները վերականգնվում են մասամբ վերջիններիս միջոցների հաշվին, մինչդեռ բյուջետային պատասխանատվությունը ուղղված է ոչ միայն ֆիզիկական անձանց, այլև կազմակերպություններին, որի նպատակը հասցված վնասի լրիվ վերականգնումն է:

Ավելին, բյուջետային պատասխանատվության՝ որպես պատասխանատվության առանձին տեսակի դերի և նշանակության անտեսման պատճառով ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում թողտվության և հանցավոր ինքնավստահության հետևանքով պարբերաբար ավելանում են պետական բյուջեից կատարվող հափշտակությունները՝ (սուբվենցիա, սուբսիդիա, բյուջետային վարկավորում, բյուջետային փոխառություն) ծնելով իրենց բնույթով նոր «բյուջետային հանցագործություններ»:

Հիշատակված բյուջետային ֆինանսավորման և վարկավորման ոլորտների իրավախախտումները վկայում են ՀՀ գործող բյուջետային օրենսդրության բացթողումների, ինչպես նաև դրա կիրառման անկայունության մասին, որոնց պատճառով ընդլայնվում է բյուջետային իրավախախտումների աշխարհագրությունը, աճում է իրավախախտների թվաքանակը, օրակարգի խնդիր է դառնում բյուջետային իրավախտումների պատասխանատվության, ինչպես նաև բյուջետային վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների տեսական և օրենսդրական մշակման և կյանքի կոչման անհրաժեշտությունը:

Հետևաբար՝ բյուջետային պատասխանատվության և վարույթի իրավական հիմնախնդիրների գիտական հետազոտություններին ուղղված ցանկացած փորձ, անկախ ուսումնասիրությունների որակից և մակարդակից, եթե ուղղված է բյուջետային իրավունքի տեսության և ֆինանսական օրենսդրության ժամանակակից պահանջներին համապատասխան մշակմանը, ձեռք է բերում հասարակական և պետական լուրջ կարևորություն, որի իրավական կարգավորման արդյունավետ լուծումները կարող են մեծ ավանդ հանդիսանալ հայրենական իրավագիտության և ՀՀ ԱԺ ապագա իրավաստեղծ գործունեության ոլորտում:

ՀՀ-ում իրականացող լայնամասշտաբ իրավական բարեփոխումները և դրանց արդյունքների հիման վրա ձևավորված իրավական նոր հայեցակարգերը մեծամասամբ ուղղված են գործող իրավական պատասխանատվության արդյունավետության բարձրացման, կոռուպցիայի դեմ միասնական պայքարի կազմակերպման, ինչպես նաև պետության տնտեսական գործունեության ոլորտում ձևավորվող և արագ ընդլայնվող բյուջետային իրավախախտումների կանխմանը, ֆինանսական հարկադրանքի, բյուջետային պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրների գիտական մշակմանը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հայրենական իրավագիտության ոլորտում բյուջետային իրավական հիմնախնդիրները դուրս են մնացել հայ իրավագետների ուշադրությունից, հատկապես անտեսված են բյուջետային իրավական պատասխանատվությանը և վարույթի իրավական կարգավորմանն ուղղված գիտական հետազոտումները: ՀՀ-ում բյուջետային իրավունքի գիտության և ենթաճյուղի զարգացման շահագրգռվածությունը ինքնին արդիական են դարձնում բյուջետային իրավական ցանկացած ինստիտուտի ուսումնասիրությունը և գիտական հետազոտությունների առարկան, որոնք հայրենական ֆինանսիրավական գիտության համար այսօր կարող են հայտնության արժեքներ ձեռք բերել:

Համաշխարհային տնտեսական ցնցումների և ճգնաժամերի պարբերականությունը, դրանց կրկնությունների հաճախականության ռիսկերը օրվա հրամայական են դարձնում բյուջետային-իրավական սանկցիաների սահմանման և հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունը, որոնք ինչպես ներպետական, այնպես էլ պետությունների արտաքին տնտեսական համագործակցության ոլորտների ֆինանսական պարտավորությունների կատարումն ապահովող ժամանակակից իրավական լավագույն միջոցներ են, առանց որոնց կիրառման անհնար է ապահովել կենտրոնացված, ինչպես նաև համայնքների բյուջեների համալրման նպատակով դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացը:

Այսօր ՀՀ-ում հարկային-բյուջետային օրենսդրության ցանկացած խախտում, առավել ևս եթե կատարվում է դիտավորյալ, ուղղված է ՀՀ և համայնքային բյուջեների՝ որպես պետության ֆինանսատնտեսական ինքնիշխանության հզորության վնասմանը, որն ավելցնում է հասարակական մեծ վտանգ ներկայացնող բյուջետային հանցագործությունների քանակը, որոնց տեսակային օբյեկտները բազմազան են, արտահայտվում են «Բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջները և համայնքային բյուջեների մասին որոշումը չկատարելու, բյուջետային միջոցները ոչ նպատակային օգտագործելու, բյուջեների կատարման մասին հաշվետվությունները օբյեկտիվորեն չներկայացնելու, պետական և համայնքային բյուջեներից մատուցված ծառայությունների համար վճարումների նորմատիվների խախտմամբ, ծախսերի ֆինանսավորմամբ, որոնք սահմանված չեն բյուջետային ելևմտի (расход) ցուցակում, բյուջետային միջոցներ տնօրինողներին միջոցների հատկացման ժամկետների խախտմամբ կամ մասամբ տրամադրման, ինչպես նաև մի շարք այլ խախտումներ, որոնք ամրագրված են բյուջետային օրենսդրությամբ: Ժամանակն է, որ բյուջետային իրավախախտումների համակարգում հստակեցվեն և սահմանազատվեն բյուջետային իրավախախտումները, դասակարգվեն ըստ իրավախախտումների օբյեկտների և հասարակական վտանգավորության աստիճանի,

օրենսդրական ամրագրումներ ստանալու բյուջետային պատասխանատվության և վարույթի ելակետային դրույթները:

Հայկական պետականության զարգացման ներկա պայմաններում օրակարգի հրատապ հարցերից մեկը բյուջետային նոր օրենսդրության ձևավորումն է՝ բյուջետային կարգապահության և վերահսկողության օրենսդրական սահմանումների, դրանց իրավական ամրագրումն է, որի բացը գործնականում իրեն զգացնել է տալիս իշխանությունների բյուջետային քաղաքականության մշակման և առօրյա իրացման գործընթացներում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին բյուջետային միջոցների աղաղակող կորուստներ են արձանագրվում հատկապես բյուջետային վարկավորման, փոխառությունների, դոտացիաների, սուբսիդիաների և սուբվենցիաների ոլորտում, որի հիմնական պատճառը բյուջետային կողիֆիկացված օրենսդրության բացակայությունն է (բյուջետային օրենսգիրք), իսկ եղածը ընդամենը 1997 թ. հունիսի 24-ի ԱԺ-ի կողմից ընդունված «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքն է, որտեղ անհասկանալիորեն շրջանցված են բյուջետային պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրները:

ՀՀ աստիճանական մոտքը համաշխարհային (եվրոպական և եվրասիական) տնտեսական շուկա ընդարձակում է հանրապետության ֆինանսատնտեսական, բյուջետային գործունեության շրջանակները, օրակարգի խնդիր է դառնում միջազգային մաքսային և հարկային համագործակցության իրավական կարգավորումը՝ ուշադրության կենտրոնում պահելով արժույթային գործունեության ֆինանսական պատասխանատվության սահմանման և կիրառման հիմնահարցերը:

ՀՀ ֆինանսական գործունեության հիշատակված բոլոր ոլորտները չունեն միասնական, կողիֆիկացված ֆինանսական պատասխանատվություն՝ այն սահմանող օրենսդրությունից, որի պատճառով բացասական տեղաշարժեր են արձանագրում ՀՀ ֆինանսական համակարգի ցանկացած ոլորտում: Առավել ստվերված է ֆինանսական իրավունքի հայրենական գիտությունը, որտեղ, ի թիվս ֆինանսաիրավական շատ ինստիտուտների, մոռացված է բյուջետային իրավախախտումների պատասխանատվության, ինչպես նաև վարույթի հիմնախնդիրների լուսաբանման, գիտական վերլուծությունների ցանկությունը. այդպիսի պահանջները հրատապ են դարձնում բյուջետային-իրավական պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների արդի իրավագիտական բացահայտումները:

ՀՀ կառավարության տնտեսվարման ներկա բարեփոխումները, միջազգային տնտեսական ճգնաժամերը պետությունների ֆինանսաբյուջետային գործունեության անվտանգության ապահովման դիրքերից նորանոր պահանջներ են առաջադրում իրավական նոր հայեցակարգերի մշակման, նոր դիրքորոշումների ձևավորման ուղղությամբ: Հետևաբար՝ ՀՀ ֆինանսական համակարգի ցանկացած օղակի բնականոն գործունեության ապահովումը մեծապես կախված է գործող ֆինանսական օրենսդրության միասնականացումից, ֆինանսաիրավական խախտումների, պատասխանատվության, ինչպես նաև վարույթի միասնական համակարգերի ձևավորումից, որոնք էապես կնպաստեն ֆինանսաիրավական խախտումների բացահայտմանը և համարժեք պատասխանատվության միջոցների կիրառմանը:

Ներկայումս, ժամանակակից աշխարհի իրավագիտության ոլորտում «Բյուջետային իրավունքի» տեսության և վերջինիս գործնական կիրառման հիմնախնդիրները իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում են: Խոսքը վերաբերում է բյուջետային օրենսդրության և նրանում ամրագրված իրավախախտումների և պատասխանատվության նոր իրավական հայեցակարգերի ձևավորմանը, որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի գիտական ճանաչմանը (Гейхтман 13-16; Батыров 17-23): Նկատելի, որ իրավական կարգավորման մեխանիզմում բյուջետային պատասխանատվություն

ուղղված է ոչ միայն իրավական, այլև սոցիալական գործառնությունների իրականացմանը: Բյուջետային պատասխանատվության սոցիալական գործառնությունը ունի ընդհանուր նախագգուշական բնույթ, որն արտահայտվում է բյուջետային իրավական գործընթացների սուբյեկտներին նպատակաուղղելով՝ բյուջետային օրենսդրությամբ սահմանված հասցեագրումների բարեխիղճ կատարմանը:

Իրավաբանական պատասխանատվության համակարգում բյուջետային պատասխանատվության սահմանազատումը՝ որպես պատասխանատվության ինքնուրույն տեսակ, որով սահմանազատվում է քրեական, վարչական, քաղաքացիաիրավական պատասխանատվությունից, պայմանավորված է իրավախախտման բնույթով, դրանց սպառնիչ թվարկումը, բերված է, օրինակ, ՌԴ «Բյուջետային օրենսգրքի» 183-րդ հոդվածում, որպիսի իրավախախտումները իրենց բնույթով, իրավախախտման կազմով ընդհանուր ոչինչ չունեն վերը հիշատակված իրավունքի ճյուղերով կարգավորվող իրավախախտումների հետ (օրինակ, բյուջետային մակարդակներում սղաճի սահմանների խախտումը կամ բյուջետային միջոցների գանձմանն ուղղված դատական ակտերի կատարման անտեսումը):

Հավելենք, որ բյուջետային պատասխանատվությունը ֆինանսաիրավական պատասխանատվության տարատեսակ է, որին ներհատուկ են իրավաբանական պատասխանատվության բովանդակությունն արտացոլող այնպիսի էական հատկանիշներ, ինչպիսիք են.

- 1) պետական հարկադրանքը
- 2) բյուջետային իրավահարաբերությունների մասնակիցներին որոշակի անձնական, գույքային կամ կազմակերպական բնույթի իրավունքներից զրկելը
- 3) բյուջետային պատասխանատվությունը իրացվում է օրենքով սահմանված որոշակի վարույթային գործընթացների փուլերով
- 4) բյուջետային օրենսդրության խախտումների պատասխանատվությունը կիրառվում է բացառապես այն իրավախախտումների դեպքում, որոնք ամրագրված են բյուջետային օրենսդրությամբ:

Անդրադառնալով բյուջետային պատասխանատվության հիշատակված առանձնահատկություններից յուրաքանչյուրի իրավական հետևանքների բովանդակության տրամաբանական կապի պահպանման և վերջիններիս գիտական համակարգվածության միասնականության բացահայտումներին՝ ընդգծենք, որ բյուջետային պատասխանատվությունը՝ որպես «պետական հարկադրանք», ի տարբերություն պետական հարկադրանքի ավանդական տեսակների գործնական կիրառումների, նպատակաուղղված է բյուջետային իրավահարաբերությունների սուբյեկտների՝ իրենց կամքից անկախ պետության արտաքին ներազդեցությանը, բյուջետային իրավախախտումների կանխարգելմանը, խախտումներից զերծ մնալու նախազգուշացմանը:

Այլ խոսքով՝ բյուջետային պատասխանատվությունն ըստ էության պետական մարմինների բացասական ռեակցիան է հակաիրավական վարքագիծ դրսևորած բյուջետային իրավախախտման սուբյեկտների նկատմամբ (Суканася 228):

Բյուջետային օրենսդրության խախտումների պատասխանատվության հաջորդ առանձնահատկությունը պայմանավորված է իրավախախտման բովանդակությամբ, այսինքն՝ բյուջետային վարույթում կարող են կիրառվել անձնական ոչ գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված հարկադրանքի այնպիսի միջոցներ, ինչպիսիք կարող են համարվել ա) անձին բերման ենթարկելը, բ) զննելը, գ) քննումը և այլն:

Բյուջետային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատասխանատվությանը ներհատուկ են նաև գույքային իրավունքների սահմանափակումներ, որոնց թվին կարելի է դասել ա) տուգանքը, բ) տույժը, գ) բյուջետային ֆինանսավորման և վարկավորման դադարեցումը, դ) ֆինանսական օգնության կարգով ՀՀ պետական բյուջեից տրվող փոխհատուցման, դոտացիայի, սուբսիդիայի և սուբվենցիայի գումարների դադարեցումը, ե) գույքի վրա կալանք

դնելը, գ) արգելադրումները, է) բյուջետային հաշիվների սառեցումը, ինչպես նաև այլ բնույթի բյուջետային պատասխանատվության միջոցներ (Սուբհայասն 140-144):

Բյուջետային օրենսդրության խախտումների համար նախատեսվող պատասխանատվությանն՝ որպես առանձնահատկություն, ներհատուկ է վերջինիս կիրառման օրենքով սահմանված արարողակարգային (վարույթային) ձևը: Այս կարգը ոչ միայն հնարավորություն է ընձեռնում հստակեցնելու պատասխանատվության կիրառման չափն ու սահմանը, այլև հնարավոր է դարձնում պարզել իրավախախտման պատճառները, ապահովել իրավախախտման բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընկալությունը, որը կողմնորոշում է իրավաբանական պատասխանատվության և հարկադրանքի միջոցի ճիշտ ընտրության և գործնական կիրառման ապահովումը:

Որպես առանձնահատկություն, նկատենք, որ բյուջետային պատասխանատվությունը կարող է կիրառվել բացառապես իրավական հիմքի առկայությամբ՝ անկախ նրանց, թե որ իրավունքի ճյուղով կարգավորվող բյուջետային իրավահարաբերությունն է խախտվել: Այլ խոսքով՝ բյուջետային պատասխանատվության կիրառման հիմքում բյուջետային իրավախախտումն է՝ անկախ սուբյեկտների տեսակից և կարգավիճակից:

Իրավունքի տարբեր ճյուղերում դրսևորվող բյուջետային պատասխանատվության կիրառման իրավական հիմք կարող են հանդիսանալ.

- 1) բյուջետային իրավախախտումները
- 2) բյուջետային օրենսդրության այն իրավունքները, որոնք վարչական իրավախախտման հատկանիշներ են պարունակում
- 3) ինչպես նաև բյուջետային օրենսդրության այն խախտումները, որոնք քրեական պատասխանատվության հատկանիշներ են պարունակում:

Բյուջետային օրենսդրության խախտումների պատասխանատվությունը դուրս չէ ընդհանուր պատասխանատվությունը ներհատուկ հայեցակարգային սկզբունքներից:

Նկատի ունենք իրավախախտման տարրերի ամբողջական կազմի առկայությունը: Կարծում ենք իրավախախտման կազմի ճշգրիտ բնութագրման համար Եական Նշանակություն ունեն արտաքին-օբյեկտիվ և ներքին-սուբյեկտիվ հատկանիշները, որոնք բավարար պայման են գործողությունը (անգործությունը) իրավախախտում հիմնադրելու համար, որը հնարավորություն կստեղծի իրավաբանական այս կամ այն տեսակի պատասխանատվության կիրառման համար:

Նկատենք, որ բյուջետային օրենսդրության խախտման համար պատասխանատվության կիրառման մյուս իրավական հիմք՝ որպես առանձնահատկություն կարող է հանդիսանալ համապատասխան իրավունքի ճյուղի կամ նորմի առկայությունը, որը իրավախախտման դեպքում կիրառվում է որպես «իրավունքի կիրառման» ակտ, որը կարելի է համարել «գործընթացի հիմք»: Առանց կիրառման իրավական ակտի անհնար է խոսել որևէ որոշման, վճռի կամ դատավճռի մասին՝ որպես կոնկրետ դեպքի բյուջետային պատասխանատվության իրացման վերջնարդյունքի:

Վերջապես, բյուջետային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատասխանատվության առանձնահատուկ կողմ է այն, որ վերջինս կարող է իրացվել միայն այդ նպատակի համար կյանքի կոչված ինչպես պետական մարմինների, այնպես էլ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից:

Վերլուծությունները հուշում են, որ բյուջետային օրենսդրության խախտումների ընդգրկուն իրավական արձանագրումները, որոնք առավել ամբողջական են դարձնում բյուջետային պատասխանատվության բովանդակությունը, իրավագետ գիտնականների հետազոտությունների և բացահայտումների հիման վրա սահմանված են ՌԴ «Բյուջետային օրենսգրքի» 281-րդ հոդվածում, որտեղ բյուջետային օրենսդրության խախտումների պատասխանատվությունը սահմանվում է որպես բյուջեների նախագծերի կազմման, քննարկումների, բյուջեների

հաստատման, ինչպես նաև կարգավորման և կատարման հաշվետվությունների նկատմամբ օրենքով սահմանված անբարեխիղճ վերահսկողության դրսևորում, որպիսի գործողությունների և անգործության դեպքերում բյուջետային օրենսդրությունը սահմանում է պատասխանատվություն:

Բյուջետային օրենսդրության խախտումների համար հիշատակված օրենսգրքում առանձնացված է հատուկ գլուխ, որի 281-րդ հոդվածից մինչև 306-րդը, ըստ խախտման առարկայական օբյեկտների, սահմանված է բյուջետային պատասխանատվության կարգը, կիրառվող հարկադրանքի միջոցների համակարգը և տեսակները:

Եզրահանգումներ

Համեմատության կարգով նկատենք, որ ՀՀ-ն չունի «Բյուջետային օրենսգիրք», որի դերակատարությունը, իրավական կարգավորումը իրականացնում է, իրեն սպառնալից դեռևս ՀՀ ԱԺ 1997թ. հունիսի 24-ին ընդունված «Բյուջետային համակարգի մասին» օրենքը, որը կցկտուր աղճատված, երբեմն իրարամերժ, ինչպես նյութական, այնպես էլ գործընթացային իրավանորմերով կարգավորում է հանրապետության ֆինանսատնտեսական հզորությունն արտացոլող պետական և համայնքային բյուջեների հիմնարար սկզբունքները, կառուցվածքը, համակարգը: Սահմանում է ՀՀ պետական կառուցվածքի և կառավարման համակարգի, պետության և բյուջետային իրավահարաբերությունների մասնակիցների փոխհարաբերությունները, պետական բյուջեից աջակցության կարգով ֆիզիկական և իրավաբանական անձանց ֆինանսավորման, ինչպես նաև բյուջետային վարկավորման կարգը ըստ պետական կարիքների, ինչպես նաև գործընթացային (բյուջեների նախագծերի, կազմման, քննարկման, հարկման և կատարման) իրավական ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ, բայց բավարար պայմաններ չեն ցանկացած պետության տնտեսության, հարկաբյուջետային և ֆինանսական հարաբերությունների իրավակարգավորումների համար:

Ավելին՝ ընդգծենք, որ ՀՀ բյուջետային օրենսդրությունը, դրա զարգացման և կատարելագործման գործընթացները շրջանցված են ինչպես իրավաբան գիտնականների, այնպես էլ ներկայացուցչական բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից:

Ինչ վերաբերում է բյուջետային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության հիմնախնդիրների բացահայտումներին, ապա նկատենք որ, գործող ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքում ընդամենը անհասկանալի շարադրանքով մեկ հոդված կա, որը ընդունման պահից առ այսօր չի գործածվել: Խոսքը վերաբերում է հիշատակված օրենքի 42-րդ հոդվածին և դրա բովանդակությանը, ըստ որի «սույն օրենքի պահանջների խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց լիազորությունները իրականացնող իրավաբանական և պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով»:

ՀՀ բյուջետային օրենսդրության ծանոթությունը հուշում է, որ հանրապետության ֆինանսաբյուջետային օրենսդրության անբավարարության, առավել ևս՝ ֆինանսական համակարգի առաջատար օղակի՝ պետական և համայնքային բյուջետային օրենսդրության ձևավորման և կողմնորոգման խիստ կարիք ունի, ֆինանսական կամ բյուջետային օրենսգրքերի ընդունումը անհրաժեշտություն է, որոնց որակյալ մշակումները, ըստ իրավունքի ճյուղային կարգավորումների, կնպաստի իրավակարգավորումների որակի բարձրացմանը, երկրի ֆինանսատնտեսական, ազգային անվտանգության ռազմավարական ծրագրերի իրականացմանը, կապահովի օրինականության պահանջների իրագործումը հասարակության և պետական մարմինների՝ կոռուպցիայի դեմ միասնական պայքարի կազմակերպման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենք. 1997 թ. հունիսի 24, <https://www.arlis.am/>:
2. Սուքիասյան, Նազելի. «Ֆինանսական հարկադրանք» (ռևոլյուցիոնական դասագիրք). Ե., 2023, էջ 140-144:
3. Батыров, Сослан. «Проблемы применения и перспективы развития ответственности за нарушение бюджетного законодательства». *Финансовое право*, 2013, № 2, стр. 17-23.
4. «Бюджетный кодекс Российской федерации». *ГарантРу*, М., «Проспект», 2008, <https://www.garant.ru/doc/main/>, последний визит: 30.01.2025.
5. Гейхтман, Олег. «Бюджетно-правовая ответственность в системе юридической ответственности». *Финансовое право*, № 5, М., 2020, стр. 13-16.
6. Сукиасян Назели. *Правовые проблемы, финансовой ответственности в Республике Армения*. Ереван, 2017, стр. 228.

WORKS CITED

1. HH Azgayin Jhoghov. HH «Byujetayin hamakargi masin» o'renq. 1997 t'. hunisi 24, <https://www.arlis.am/> [Law of the Republic of Armenia "On the Budgetary System"]: (In Armenian)
2. Suqiasyan, Nazeli. «Finansakan harkadranq» (usumnakan dasagirq). E., 2023, e'j 140-144 ["Financial Coercion" (Textbook)]: (In Armenian)
3. Batyrov Soslan Ermakovich. «Problemy primeneniya i perespektivy razvitija otvetstvennosti za narushenie bjudzhetnogo zakonodatel'stva». *Finansovoe pravo*, 2013, № 2, s. 17-23 ["Problems of Application and Prospects for the Development of Liability for Violating Budget Legislation" *Financial Law*]. (In Russian)
4. Bjudzhetnyj kodeks Rossijskoj federacii, M., «Prospekt», 2008: <https://www.garant.ru/doc/main/>. ["Budget Code of the Russian Federation." *GarantRu*, Moscow, "Prospekt"]. (In Russian)
5. Gejhtman Oleg Mihajlovich .M. «Bjudzhetno- pravovaja otvetstvennost' v sisteme juridicheskoy otvetstvennosti». *Finansovoe pravo*, 2020, № 5, s. 13-16. [Budgetary and Legal Liability in the System of Legal Responsibility." *Financial Law*, No. 5, Moscow.]. (In Russian)
6. Sukiasjan Nazeli «Pravovye problemy, finansovoj otvetstvennosti v Respublike Armenija». Er., 2017, c. 228: [Legal Issues of Financial Liability in the Republic of Armenia. Yerevan.]. (In Russian)

LEGAL PECULIARITIES OF LIABILITY FOR VIOLATIONS OF BUDGET LEGISLATION

NAZELI SUKIASYAN

*Armenian State University of Economics,
Chair of Social Sciences, Doctor of Law, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The author of the scientific article aims to reveal the legal peculiarities of liability for "Violations of budget legislation" as one of the sub-branches of financial law in the field of jurisprudence, and the legal regulations of the budget process, as well as to elaborate new legal concepts of utmost theoretical and practical significance.

The author of the scientific research aims to elaborate a new legal concept of utmost theoretical and practical significance, especially in the field of financial law. The study aims to reveal the main issue related to budgetary legislation that has remained in the shadow of the country's legal system, especially the issue of budgetary legal liability for violations of budgetary legislation and legal regulations of proceedings.

The scientific article is summarized by taking into account the requirements of the basic provisions of the legal-comparative and analytical methods of revealing the main legal issues, due to which the peculiarities of legal regulations inherent in the branches of private and public law are clarified. The article also emphasizes that in the process of applying budgetary responsibility, it is necessary to practically rely on the effectiveness of the application of coercive measures of civil property liability in restoring damage caused to the state budget in case of violations of budget financing and budget crediting.

The content of the summary of the study allows the conclusion that to increase the efficiency of economic reforms, it is necessary to reform the fundamental provisions of state budget financing and crediting in the current budget legislation, elaborate the normative and sub-legislative acts reflecting the new legal regulations of economic management, as well as carry out preparatory work towards the elaboration of the Budget Code.

Keywords: *liability, legal liability, budget legislation, budget offense, budgetary coercive measures, budgetary responsibility, legal peculiarities, budgetary sanctions.*

ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НАРУШЕНИЕ БЮДЖЕТНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА

НАЗЕЛИ СУКИАСЯН

*доктор юридических наук, профессор
кафедры обществознания экономического факультета
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения*

Целью научной статьи является освещение посредством проведенного автором исследования одной из подотраслей финансового права в сфере юриспруденции – бюджетного законодательства, а именно, ответственности за его нарушение, ее правовых особенностей и правового регулирования бюджетного процесса, а также разработка новых правовых концепций, имеющих большую теоретическую и практическую ценность.

Задача научного исследования заключается в разработке имеющих большую теоретическую и практическую ценность новых правовых концепций, особенно в области финансового права, а также раскрытие находящегося в тени правовой системы Республики бюджетного законодательства, в частности выявление вопросов правового регулирования бюджетно-правовой ответственности и производства в случае его нарушения.

Содержание научной статьи изложено с учетом требований основных положений сравнительно-правового и аналитического методов раскрытия юридических вопросов, благодаря чему определены особенности правового регулирования, присущего отраслям частного и публичного права. Автор особо подчеркивает, что на практике в ходе применения бюджетной ответственности необходимо опираться на эффективность применения мер принуждения гражданско-правовой и имущественной ответственности при возмещении ущерба, причиненного государственному бюджету в случае нарушения бюджетного финансирования и бюджетного кредитования.

Содержание обобщенного в статье материала приводит к заключению о том, что для продвижения экономических реформ и повышения их эффективности необходимо реформировать основные положения государственного бюджетного финансирования и кредитования в действующем бюджетном законодательстве, разработать нормативные и подзаконные акты, отражающие новые правовые нормы в сфере хозяйствования, а также провести подготовительную работу по разработке Бюджетного кодекса.

Ключевые слова: *ответственность, юридическая ответственность, бюджетное законодательство, бюджетное правонарушение, бюджетные меры принуждения, бюджетная ответственность, правовые особенности, бюджетные санкции.*